ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Նարեկ Կարապետյան, Մակրոտնտեսական քաղաքականության վարչության հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ղազախստան, ք. Ալմաթի, 2024 թվականի հունվարի 29-ից փետրվարի 2-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամի Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Սուվերեն ռիսկի և պարքի կայունության շրջանակ շուկային հասանելիություն ունեցող երկրների համար /Sovereign Risk and Debt Sustainability Framework for Market Access Countries (SRDSF for MAC)» թեմայով աշխատաժողովին, որի շրջանակներում ներկայացվել է պարտքի կայունության գնահատման նոր շրջանակը և գործնականում կիրառման հնարավորությունները:

Շրջանակը ենթադրում է տարբեր ժամանակային հորիզոններում (կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ) պարտքի ռիսկերի բազմագործոն գնահատում, ինչը հնարավորություն է տալիս առավել ամբողջական և հիմնավոր գնահատական տալ պարտքի կայունության վերաբերյալ:

5. Քննարկված թեմաները՝

1. *SRDSF-ի ընդհանուր բնութագիրը.* սուվերեն սթրես թեստեր, կայունություն և չկայունացող պարտք,
2. *SRDSF-ի կիրառման նախադրյալները* . պարտքի ծածկույթ, պարտքային գործիքներ, հաշվառման սկզբունքներ, պարտքի կոնսոլիդացիա, պարտք ձևավորող գործոնները,
3. *SRDSF-ի արդյունքների վերլուծություն.* իրատեսականության վերլուծություն և և բազային սցենարի մշակում,
4. *Կարճաժամկետ վերլուծություն.* Լոգիթ մոդել և կարճաժամկետ համաթվի մշակում,
5. *Միջնաժամկետ վերլուծություն.* համախառն ֆինանսավորման պահանջի գործիք, ֆինանսական հնարավորությունների համաթվի մշակում, սթրես սցենար և մակրո-ֆիսկալ շոկեր,
6. *Երկարաժամկետ կայունության և ռիսկերի վերլուծություն.* կենսաթոշակային, առողջապահական, բնակլիմայական և այլ ռիսկերի գնահատում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Աշխատաժողովի շրջանակներում նախատեսված դասախոսություններն ուղեկցվել են քննարկումներով՝ հնարավորություն տալով պարզաբանելու նոր շրջանակի առավելություններն ու կիրառման հնարավորությունները: Աշխատաժողովի ամփոփման փուլում Հայաստանը ներկայացնող մասնակիցների կողմից հակիրճ կերպով ներկայացվել է Հայաստանի պարտքի կայունության վերլուծության արդյունքները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Կիրառել «Սուվերեն ռիսկի և պարքի կայունության շրջանակ շուկային հասանելիություն ունեցող երկրների համար /Sovereign Risk and Debt Sustainability Framework for Market Access Countries (SRDSF for MAC)» գործիքակազմը ՀՀ կառավարության պարտքի կայունության վերլուծությունների ժամանակ: Ժամկետը՝ տարեվերջ, պատասխանատու՝ Մակրոտնտեսական քաղաքականության վարչություն, ակնկալվող արդյունք՝ ՀՀ կառավարության պարտքի ռիսկերի առավել ամբողջական և բազմագործոն գնահատականների առկայություն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

7 փետրվար, 2024թ.